Ֆեմինիստ կանայք

Նրանք փոխում են աշխարհը

2022

ՖԵՄԻՆԻՍՏ ԿԱՆԱՅՔ

Նյութերի հավաքագրումը՝ *Զարուհի Հովհաննիսյանի*
Խմբագրումը և դիզայնը՝ *Անուշ Հարությունյանի*
Սրբագրումը՝ *Աննա Ղուկասյանի և Անուշ Հարությունյանի*
Ծրագրի ղեկավար՝ *Անահիտ Արշալույսյան*

Հայ և արտասահմանյան ֆեմինիստ կանանց մասին այս գրքույկը պատրաստվել է «Ֆեմինիզմ և հաշմանդամություն» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրագործվել է Հայաստանում կանանց հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում՝ գերմանական Ֆիլիա հիմնադրամի և Գերմանիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ:

Գյումրի, 2022

Բովանդակություն

Առաջաբան.....5
Կարինե Գրիգորյան.....7
Լարա Ահարոնյան.....9
Զարուհի Հովհաննիսյան.....11
Աննա Նիկողոսյան.....13
Դիանա Աբգար.....15
Ալենուշ Տերյան.....17
Զապել Եսայան.....19
Շուշանիկ Կուրղինյան.....21
Քի Բրաուն.....23
Հելեն Քելլեր.....25
Մարի Կյուրի.....27
Ֆրիդա Կալո.....29
Վիրջինիա Վուլֆ.....31

Առաջաբան

Այս փոքրիկ գրքույկն այն կանանց մասին է, ովքեր, պատմական տարբեր ժամանակահատվածներում, գիտության և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կոտրելով կարծրատիպեր, դարձել են առաջինը և ճանապարհ բացել մյուս կանանց համար: Նրանք մեծ ներդրում են ունեցել կանանց իրավունքների համար մղվող պայքարի, ինչպես նաև ֆեմինիստական շարժման պատմության և հավասարության դիսկուրսի զարգացման գործում:

Նրանցից շատերն իրենց չեն դիրքավորել որպես ֆեմինիստներ, սակայն եղել են հանրային կյանքում և մտածողության մեջ շրջադարձային փոփոխություններ կատարողներ: Այդպիսին էր Մարի Կյուրին՝ առաջին և միակ կինը, ով ստացել է կրկնակի Նոբելյան մրցանակ և միակ մարդը, ով Նոբելյան մրցանակ է ստացել երկու տարբեր գիտական բնագավառներում:

Կանանցից ոմանք ապրել են ծայրահեղ պահպանողական հասարակություններում, որտեղ կնոջ համար գիտությամբ զբաղվելն անընդունելի էր: Սակայն, անտեսելով անհավասար վերաբերմունքն ու կանանց նկատմամբ դրսևորվող սահմանափակումները, քայլել են իրենց երազանքի ետևից՝ հասնելով մեծ հաջողությունների և հանրային ճանաչման, ինչպես հայազգի գիտնական, Իրանի առաջին կին աստղագետ, Թեհրանի պետական համալսարանի առաջին կին դասախոս Ալենուշ Տերյանը:

Այս կանանցից շատերը կանգնած են ֆեմինիստական պայքարի ակունքներում. նրանք գրել են ֆեմինիստական աշխատություններ, որոնք շատ արդիական են, ինչպես, օրինակ, Զապել Եսայանի և Շուշանիկ Կուրղինյանի ստեղծագործությունները:

Կանանցից շատերը բախվել են լրացուցիչ խոչընդոտների՝ պայմանավորված իրենց հաշմանդամությամբ, սակայն ապացուցել են, որ ստեղծագործ, պայքարող և ֆեմինիստական արժեքներով առաջնորդվող կնոջ համար որևէ անհաղթահարելի խոչընդոտ լինել չի կարող: Այդպիսին էին բրիտանացի գրող Վիրջինիա Վուլֆը, ով, հաղթահարելով հոգեկան առողջության հետ կապված խնդիրները, դարձավ մոդեռնիստական գրականության ամենախոշոր և ազդեցիկ ներկայացուցիչներից մեկը,

ամերիկացի գրող և հասարակական գործիչ Հելեն Քելլերը՝ տեսողության և լսողության խնդիր ունեցող առաջին մարդն աշխարհում, ով ստացել է բակալավրի աստիճան, մեքսիկացի նկարչուհի Ֆրիդա Կալոն, ինչպես նաև մեր կողքին ապրող և իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող Կարինե Գրիգորյանն ու Քի Բրաունը:

Ֆեմինիստական շարժումը շարունակում է զարգանալ ժամանակակից ակտիվիստների ու իրավապաշտպանների շնորհիվ, ովքեր իրենց ամենօրյա գործունեությունը ծավալում են հանուն հավասարության, արժանապատվության և հանրային գիտակցության փոփոխության:

Կարինե Գրիգորյան

Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների ջատագով, «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության հիմնադիր և նախագահ

Կարինե Գրիգորյանն իր ֆեմինիստական պայքարի ճանապարհը սկսել է վաղ մանկությունից: Կարինեն ծնվել է 1975 թվականին Գյումրիում: Ծանր ծննդաբերության հետևանքով երեխան ձեռք է բերում հաշմանդամություն: Բժիշկները ծնողներին խորհուրդ են տալիս թողնել նրան ծննդատանը, սակայն վերջիններս հրաժարվում են: Այդ որոշումը նոր պայքարի սկիզբն էր՝ պայքար խտրականության խորը արմատների դեմ: Անդրադառնալով իր մանկության տարիներին և հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքին՝ Կարինեն նշում է.

> *Հիշում եմ, թե ինչպիսի զանազանությամբ էին ծնողներս աշխատում շեղել իմ ուշադրությունը, որ չնկատեի հարևանների կամ անցորդների կարեկցական կամ ծաղրական հայացքները:*

Այդ խտրականության դրսևորումները Կարինեն զգում էր կրթություն ստանալու տարիներին ևս, սակայն, հաղթահարելով բոլոր դժվարությունները, գերազանցությամբ ավարտում է համալսարանը:

2006 թվականին Կարինե Գրիգորյանը մասնակցում է ԱՄՆ-ում կայացած «Կանանց առաջնորդության և հաշմանդամության ինստիտուտ» երեքշաբաթյա դասընթացին, որը համախմբել էր հաշմանդամություն ունեցող առաջնորդ կանանց՝ աշխարհի շուրջ 30 երկրներից: Այդ ծրագիրը հիմնովին փոխում է Կարինեի կյանքը. վերադառնալով Հայաստան՝ նա հիմնում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպությունը, որի

նպատակը հաշմանդամություն ունեցող կանանց հզորացնելն էր:

Իր գործունեության ընթացքում կազմակերպությունն աջակցել, զորեղացրել և իրենց իրավունքների մասին իրազեկել է հաշմանդամություն ունեցող բազմաթիվ կանանց, առաջին անգամ բարձրաձայնել ու խոսել է այնպիսի փակ թեմաների մասին, ինչպիսիք հաշմանդամություն ունեցող կանանց սեռական կյանքի և վերարտադրողական առողջության խնդիրներն են:

> *Մի՛ վախեցեք լինել նորարար և բարձրացնել այնպիսի հարցեր, որոնց մասին մինչ այդ ոչ ոք չի համարձակվել խոսել: Եղե՛ք դրական, մի՛ հիասթափվեք անհաջողություններից և միշտ ձգտեք գտնել այլընտրանքային լուծումներ:*

Ավելին, Կարինեն Հայաստանում այն եզակի կանանցից է, ով կոտրեց նաև հաշմանդամություն ունեցող կանանց սեռական կյանքի և մայրության վերաբերյալ կարծրատիպերը: Նա երջանիկ կին ու մայր է, ով հոգ է տանում իր զավակի մասին:

> *Երբ ետ եմ նայում իմ անցած ճանապարհին, դժվարություններին և մարտահրավերներին, ինքս ինձ հարց եմ տալիս, թե ինչպիսին կլիներ իմ կյանքը, եթե տղա լիներ: Համոզված եմ՝ այդքան արտահայտված իգականության տարբեր ձևերի չէի ենթարկվի: Սակայն վայրկյան անգամ չեմ ափսոսում և հպարտ եմ, որ կին եմ, այլապես հնարավոր է՝ չձգտեի հասնել այն ամենին, ինչին հասել եմ՝ փոխելով շատ շատերի կյանքը:*

Լարա Ահարոնյան

Ֆեմինիստ-ակտիվիստ,
«Կանանց ռեսուրսային կենտրոն»
հասարակական կազմակերպության
և Հայաստանում կանանց
հիմնադրամի համահիմնադիր

Հայաստանում ֆեմինիստական պայքարի նշանավոր կանանցից մեկը՝ Լարա Ահարոնյանը ծնվել է 1972 թվականին Լիբանանում: Դեռ դպրոցական տարիներին սկսել է հետաքրքրվել ֆեմինիստական գրականությամբ: Դպրոցահասակ աղջիկը այդ տարիներին տեսնում է նաև պատերազմի դաժան դեմքը:

> *Պատերազմը նաև շատ ազդեցություն է ունեցել ինձ վրա: Ես միշտ ասում էի, որ եթե մի օր ապագա դուրս գամ, հեղս մի բան չլինի, հապրագ չեմ բողոքելու ու ամեն ինչ անելու եմ, որ լավ լինի կողքիս մարդկանց համար, որ պատերազմ չլինի:*

Ահարոնյանների ընտանիքը Բեյրութում հերթական հրետակոծությունից վնասված տնից փախնում է Սիրիա, ապա Կիպրոս, որտեղից էլ մեկնում Կանադա: Ընտանիքը փախստականի կարգավիճակ է ստանում Կանադայում, և Լարայի կյանքում սկսվում է նոր շրջան: Քոլեջում ուսանելու տարիներին նա հաճախում է կանանց խմբակ, որտեղ կարդում էին ֆեմինիստական գրականություն և ուսումնասիրում ֆեմինիստական շարժումը:

> *Ես շատ եմ պայքարել՝ թե՛ ընտանիքում և թե՛ դպրոցում: Հիմա իրավիճակում դու չես կարող այլ բան լինել, քան ֆեմինիստ: Հիմի ամեն ինչի պատասխաններն ու զղջմունքյանս պատասխանները ֆեմինիստական գրականության մեջ ես գտել եմ:*

Հայաստանի հետ Լարայի կապը սկսվում է կամավորական աշխատանքից. գալիս էին Արցախ, օգնում հետպատերազմական վիճակում գտնվող անձանց, վերականգնում պատմամշակութային հուշարձանները: Հայաստանն ավելի ուշ դառնում է Լարա Ահարոնյանի հիմնական տունը. նա ամուսնու և երկու երեխաների հետ տեղափոխվում է Հայաստան, իսկ մյուս երկու զավակներն արդեն ծնվում են Հայաստանում: Այստեղ, համախոհ կանանց հետ, Լարան հիմնադրում է «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Նա սկսում զբաղվել կանանց իրավունքների պաշտպանությամբ՝ ստեղծելով մի անվտանգ տարածք, որտեղ կանայք կարող են անկաշկանդ խոսել, բարձրաձայնել իրենց հուզող խնդիրները, ստանալ գիտելիքներ սեռական և վերարտադրողական իրավունքի մասին:

> «*եթե Ափյուռֆում ապրեի, նույնը չէր լինելու: հայապտանում ես ավելի ֆեմի-նիստ դարձա, ավելի բաներ իմացա, տրավմաներիս հետ աշխատեցի: Հիվելի երիտասարդ տարիքում սեռական ոտնձգությունների եմ ենթարկվել, որի մասին չեմ կարողացել խոսել, ու տեսել եմ, որ միայն ես չեմ, շատ ավելի տարածված է այդ ամենը:*»

2010 թվականին Լարա Ահարոնյանը հիմնադրում և նախագահում է «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան: Լարան համահիմնադիրն է նաև «Հայաստանում կանանց հիմնադրամի», որի նպատակն է աջակցել ֆեմինիստական դիսկուրսի, ապահով տարածքների և նախաձեռնությունների ամրապնդմանը՝ ուղղված այն հիմնական մարտահրավերներին, որոնց Հայաստանում այսօր բախվում են կանայք և աղջիկները:

Իր գործունեության համար Լարա Ահարոնյանն արժանացել է մի շարք միջազգային մրցանակների: Նրա կերպարը ոգեշնչել է բազմաթիվ կանանց և աղջիկների՝ իրենց իրավունքների պաշտպանությամբ զբաղվելու և առկա խնդիրների լուծման ուղղությամբ պայքարի նոր ձևեր մշակելու համար:

Զարուհի Հովհաննիսյան

Ֆեմինիստ-ակտիվիստ, իրավապաշտպան, ֆեմինիստական բանաստեղծությունների հեղինակ

«*... ես կին եմ,*
կնոջ պարկերը փաղաքում
միշտ գովազդում է
ինչ-որ թեթևամիտ բաներ,
իսկ ես պայքարում եմ.
ես պայքարի արշյանն եմ...»

Կին, ով վերցրեց բարձրախոսն ու սկսեց հանրային տարածքներում խոսել անարդարության, մարդու իրավունքների և ազատությունների մասին:

Զարուհի Հովհաննիսյանը երկար ճանապարհ էր անցել մինչ ակտիվիստական պայքարին միանալը: Նա ստացել է երաժշտական կրթություն՝ ավարտելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ջութակի բաժինը, սովորել է լրագրություն և աշխատել հայաստանյան մի շարք հեռուստաընկերություններում՝ որպես լրատվական-քաղաքական հաղորդումների մեկնաբան ու լրագրող: Սակայն սեփական կարծիքն ու պատկերացումները բարձրաձայնելու, ինչպես նաև հանրային գիտակցության փոփոխության գործում ազդեցություն ունենալու ցանկությունը նրան բերեցին հանրային դաշտ՝ սկզբում հրապարակախոսական և ակտիվիստական գործունեություն, ապա նաև իրավապաշտպանություն:

Ավելի ուշ Զարուհի Հովհաննիսյանը ստացավ նաև իրավաբանի կրթություն, սակայն, նրա համոզմամբ, ֆեմինիստական պայքարի հիմնական գործիքներն ակտիվիստական միավորումներն են, խոսքն ու

բանաստեղծությունները: Բանաստեղծական խոսքի միջոցով նա քննադատում է հայրիշխանական համակարգի կողմից պարտադրված իրականությունը, որը խեղում է մարդկային հարաբերությունները՝ դրանք կաղապարելով ուժի և իշխանության տիրույթում:

«Աղամարդկանց» աշխարհ
է սա,
միայն նրանք են իշխում,
միայն նրանք են տիրում,
Սիրում, բայց չեն սիրում...

Զարուհու ստեղծագործությունները, որոնք տպագրվում են տարբեր պարբերականներում, նրա պատկերացումների, կնոջ ազատագրման ու սիրո մասին են: Զարուհին մերժում է բռնությունը և խոսում կյանքի մշակույթի մասին: Այդ համատեքստում նա անդրադառնում է նաև խաղաղության թեմային, սուր քննադատության ենթարկում սոցիալական անարդարության և անհավասարության դրսևորումները.

Ես ունեմ իրավունք
խաղաղության,
և դա իմ համամարդկային
և հիմնարար իրավունքն է,
Ես կոչ եմ անելու
խաղաղության,
քանի որ պատերազմի
դեմքը
հակամարդկային է:

Քաղաքացիական նախաձեռնությունների ու շարժումների մեջ ձևավորվեցին ու հղկվեցին Զարուհու պատկերացումները: Նա ակցիաների ընթացքում ջութակ էր նվագում և բանաստեղծություններ կարդում, միանում հանրային բողոքի բնապահպանական և ֆեմինիստական ակցիաներին:

Աննա Նիկողոսյան

Ֆեմինիստ-ակտիվիստ,
Ֆեմ գրադարանի համահիմնադիր

Դիմադրական պայքարների ակտիվ մասնակից Աննա Նիկողոսյանը ժամանակակից հայ ֆեմինիստական շարժման վառ ներկայացուցիչներից մեկն է: Դեռևս դեռահասության տարիներին նա ներքին ընդվզում ուներ համակարգային անարդարության, անհավասարության և բռնության նկատմամբ: Աննան միացավ ակտիվիստական խմբերին և ակտիվորեն ձևավորվող քաղաքացիական նախաձեռնություններին:

> *Կամաց-կամաց բայահայտում էի ինքս ինձ, բայահայտում էի հանրային տարածք ասվածը, բայահայտում էի, թե ինչ է նշանակում մի քանի հազար մարդկանցով լինել մի տարածքում և ինչ-որ բան պահանջել:*

Ընտանիքի անդամները հաճախ չէին հասկանում աղջկա ակտիվիստական մղումները և փորձում էին սահմանափակել նրան: Բայց դա էլ ավելի էր կոփում Աննային՝ համոզելով նրան սեփական պայքարի կարևորության մեջ:

Ֆրանսիական համալսարանում ուսանելու տարիներին Աննան սկսեց աշխատել «Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպությունում, որն այդ տարիներին ակտիվորեն զբաղվում էր կանանց իրավունքների պաշտպանությամբ, գենդերային կրթության ու հավասարության խնդիրներով: Այս տարիներին էր, որ նա սկսեց հետազոտել նաև մեդիա տարածքում կանանց ներկայացման ու կանանց նկատմամբ բռնության դրսևորումները, որոնք հաղորդումների և հեռուստասերիալների միջոցով նորմալիզացվում էին:

> Մարդկանց մեծ մասն իրենց մեզ կրում են հայրիշխանությունը: Մի մասի համար դա արտոնյալ դիրք է. նրանք, մասնավորապես տղամարդիկ, այդ արտոնություններից օգտվում են, իսկ մյուս մասի դեպքում այն ավելի ներքնայնացված այրապաշտություն է, երբ այն դառնում է քո էության, քո մտածելակերպի անբաժանելի մասը: Եվ երբ հայտնվում է ինչ-որ մեկը կամ ինչ-որ խումբ, որը փորձում է կոտրել այդ գաղափարախոսական մեքենաները և պայքարել կանանց ապատագրման համար, դա բերում է շատ խորը և ուժգին դիմադրության:

Այնուհետև Աննան ուսումը շարունակում է Մանչեստերի համալսարանի «Գենդեր, սեռականություն և մշակույթ» մագիստրոսական ծրագրում: Այդ ժամանակահատվածը բացեց Աննայի համար լայն հնարավորություններ: Մասնագիտական գրականության մեծ ընտրություն կար. կարդում էր ֆեմինիստ հեղինակներին, ուսումնասիրում ֆեմինիստական շարժումները և ուղղությունները:

Այստեղ էլ ծագեց Հայաստանում ֆեմինիստական գրադարան հիմնադրելու միտքը: Հայաստան վերադառնալուց հետո Աննան իր համախոհների հետ ձեռնամուխ եղավ ֆեմինիստական տարածքի՝ Ֆեմ գրադարանի ստեղծմանը: Տարբեր երկրներից ակտիվիստական խմբերն ու կրթական հաստատությունները, համախոհ ընկերներն ու ֆեմինիստ հեղինակները սկսեցին գրքեր ուղարկել Ֆեմ գրադարանին: Այժմ այս տարածքը Հայաստանում միակն է, որտեղ ֆեմինիստ աղջիկներն ու կանայք կարող են ինքնակրթվել, մասնակցել քննարկումների ու զրույցների, իրենց զգալ ապահով ու հայրիշխանության պարտադրանքներից դուրս: Աննան նաև ֆեմինիստական աշխատությունների հեղինակ և թարգմանիչ է:

> Ուզում եմ ավելի շատ զբաղվել տեքստերի արտադրությամբ՝ ինքս իմ տեքստերը գրելով ու նաև թարգմանությամբ, որ դրսի փորձառությունը թարգմանվի հայերեն և առնվազն քննարկման ֆորմատում օգտակար լինի հայաստանյան իրականության համար:

Դիանա Աբգար

Աշխարհում առաջին կին դիվանագետ, Հայաստանի Առաջին Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Ճապոնիայում

«Առաջին կին հյուպատոս» կամ «առաջին կին դիվանագետ», ինչպես նաև «Հայ ժողովրդի մայր Դիանա» այսպես էին կոչում նրան: Կանանց քաղաքական մասնակցության, ընտրելու և ընտրվելու իրավունքի, դիվանագիտական գործունեություն ծավալելու մասին խոսելիս պետք է հիշենք, որ Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանում կանայք պատգամավորներ էին, իսկ առաջին կին դեսպանն աշխարհում ազգությամբ հայ Դիանա Աբգարն էր:

Նա շուրջ 50 տարի ապրել և ստեղծագործել է Ճապոնիայում ու թեև երբեք չի եղել Հայաստանում, իր կյանքի 30 տարին անմնացորդ նվիրել է հայրենիքին ու հայ ժողովրդին: Նա մեծ աջակցություն է ցուցաբերել ցեղասպանությունից փրկված և Ճապոնիա հասած հարյուրավոր հայ փախստականների:

Դիանա Աբգարը ծնվել է 1859 թվականին Բիրմայում (Մյանմար)՝ Աղաբեկյանների բազմազավակ ընտանիքում: Դպրոցահասակ տարիքում ընտանիքով տեղափոխվում է Հնդկաստան՝ Կալկաթա, որտեղ էլ ստանում է անգլալեզու կրթություն: Կալկաթայում Դիանան հանդիպում է իր ապագա ամուսնուն՝ վաճառական Միքայել Աբգարին: Նրանք ամուսնանում են և 1890 թվականին տեղափոխվում Ճապոնիայի Յոկոհամա քաղաք, որտեղ էլ ապրում են մինչև իրենց կյանքի վերջը:

Դիանան զբաղվում էր գրական գործունեությամբ: Գրում էր հոդվածներ, հիմնականում՝ քաղաքական վերլուծություններ, պատմվածքներ, քաղաքական մեկնաբանական գրքեր, որոնցում ընդգծված էին իմպերիալիզմի դատապարտումն ու «փոքր»

ժողովուրդների նկատմամբ իրագործվող անարդարությունը:

Դիանան կանխատեսում էր Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերի նկատմամբ իրագործվելիք ոճիրները: Նա նամակագրություն էր վարում Թուրքիայում գտնվող ամերիկացի միսիոներների հետ, որոնցից պարբերաբար լուրեր էր ստանում: Նա նաև կապ էր հաստատել խոշոր խաղաղապահ կազմակերպությունների անդամների՝ Անգլիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Ամերիկայի և Ֆրանսիայի ազդեցիկ գործիչների հետ՝ ամեն գնով փորձելով նրանց ուշադրությունը սևեռել ցեղասպանության վտանգի առջև կանգնած հայերի վրա:

Դիանան հայ փախստականներին սկսել է անմիջական աջակցություն ցուցաբերել 1915 թվականի կեսերից: Հայ փախստականներին աջակցելու նպատակով Ճապոնիայում իրականացվում էին դրամահավաքներ: Դիանայի վարած բանակցությունների շնորհիվ է, որ Ճապոնիայի կառավարությունը երկիր մուտք գործելու հատուկ թույլտվություն և մուտքի արտոնագիր է տվել այն փախստականներին, որոնք չեն ունեցել անձը հաստատող որևէ փաստաթուղթ: Եթե Դիանա Աբգարն այդ ժամանակ Ճապոնիայում չլիներ, ապա հարյուրավոր փախստականների ապահով տեղափոխումը Ճապոնիայով դեպի Ամերիկա և Եվրոպա չէր իրականանա:

1920 թվականին Հայաստանի նորաստեղծ Հանրապետությունը Դիանա Աբգարին նշանակեց Ճապոնիայում Հայաստանի պատվավոր հյուպատոս: Փաստացի, Հայաստանի Առաջին Հանրապետությունն առաջին երկրներից էր, որը կանանց շնորհեց ընտրելու իրավունք և իր խորհրդարանում ընդգրկեց կին պատգամավորների՝ մարտահրավեր նետելով այդ դարաշրջանի հասարակությանը, որտեղ արական սեռի ներկայացուցիչներն էին գերիշխում: Հայաստանը դարձավ աշխարհում առաջին պետությունը, որը կնոջը նշանակեց հյուպատոս: Դիանա Աբգարը, 46 տարի ապրելով Ճապոնիայում, միակ հայ կինն էր, ով լիովին տիրապետում էր միջազգային իրավիճակին: Նա մահացավ 1937 թվականին՝ Յոկոհամայում: Այժմ նրա շիրիմը գտնվում է Տոկիոյում՝ հայ-ճապոնական հասարակության հովանավորության ներքո:

Ալենուշ Տերյան

Իրանի առաջին կին աստղագետ, Թեհրանի պետական համալսարանի առաջին կին դասախոս

Ալենուշին անվանում են «իրանական աստղագիտության մայր»: Նա Թեհրանի պետական համալսարանի առաջին կին դասախոսն էր, Իրանի առաջին արեգակնային աստղադիտարանի հիմնադիրը: Նրա հետազոտությունները հիմք հանդիսացան Իրանում աստղաֆիզիկայի զարգացման համար:

20-րդ դարի առաջին կեսին գիտությամբ զբաղվող կանանց համար ամբողջ աշխարհում և հատկապես պահպանողական մահմեդական երկրներում կային բազմաթիվ խոչընդոտներ: Սակայն Ալենուշին հաջողվեց հաղթահարել հասարակարգում առկա խոչընդոտները և նվիրվել գիտությանը՝ ցուցաբերելով մեծ խիզախություն և համառություն:

Ալենուշ Տերյանը ծնվել է 1920 թվականին թեհրանահայ ընտանիքում: Մայրն ուսանել էր Շվեյցարիայում և ֆրանսերենի ուսուցչուհի էր, իսկ հայրը՝ գրող, իրանական հայտնի «Շահնամե» էպոսի և Ֆիրդուսու բանաստեղծությունների հայերեն թարգմանությունների հեղինակ, Նոր Ջուղայի հայկական ընտանիքի զավակ Արիզադ Տերյանն էր, ով իր կյանքի վերջին 20 տարիներին ծառայել է որպես Իրանի «Սեփահ բանկի» տնօրեն: Ալենուշը մեծացել է գրական, թատերական միջավայրում, և բոլորին թվում էր, թե աղջիկը կընտրի հումանիտար ուղղությունը: Սակայն Ալենուշն ընտրեց գիտությունը:

1947 թվականին նա ավարտում է ուսումը Թեհրանի համալսարանի գիտության ֆակուլտետում և աշխատանքի անցնում նույն ֆակուլտետի ֆիզիկայի լաբորատորիայում, իսկ մեկ տարի անց նշանակվում է լաբորատորիայի գործառությունների ղեկավար:

Այդ ժամանակահատվածում ուսումը Սորբոնի համալսարանում

շարունակելու հնարավորություն է ստեղծվում Թեհրանի համալսարանի ուսանողների համար: Տերյանը փորձում է համոզել իր դասախոս Մահմուդ Հեսաբիին, որ օգնի իրեն Ֆրանսիայում ուսանելու համար կրթաթոշակ ստանալ, սակայն նրան մերժում են՝ կին լինելու պատճառով: Ալենուշը չի համակերպվում այս որոշման հետ և հոր ֆինանսական աջակցությամբ մեկնում է Փարիզ և շարունակում ուսումը Սորբոնի համալսարանի մթնոլորտային ֆիզիկայի ֆակուլտետում: 1956 թվականին նա ստանում է ասպիրանտի աստիճան և առաջարկ՝ մնալ և դասախոսել ֆիզիկայի ֆակուլտետում: Սակայն Ալենուշ Տերյանը որոշում է վերադառնալ Իրան և սկսում է դասավանդել Թեհրանի համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում:

> *«Ես ոչնչի առջև կանգ չէի առնում, ինչ համար կինը և տղամարդը հավասար են: Եթե ես յանկանում էի ինչ-որ բանի հասնել, կին լինելը ինձ չէր կարող եր պահել այդ մրժից:»*

Ուսանելով Գերմանիայի արևային ֆիզիկայի աստղադիտարանում՝ 1964 թվականին Ալենուշն արժանանում է պրոֆեսորի կոչման և դառնում Իրանի առաջին կին պրոֆեսորը:

1966 թվականին նա ընտրվում է Թեհրանի համալսարանի երկրաֆիզիկայի կոմիտեի անդամ, իսկ 3 տարի անց նշանակվում Թեհրանի համալսարանի Երկրաֆիզիկայի հիմնարկի արևային ֆիզիկայի հետազոտությունների խմբի նախագահ, աշխատանքի անցնում իր հիմնադրած արևային ֆիզիկայի աստղադիտարանում:

Տերյանն աստղաֆիզիկա դասավանդող առաջին կինն էր Իրանում: Նա իր կյանքը նվիրաբերեց գիտությանը, չամուսնացավ, զավակներ չունեցավ և մահացավ Թեհրանի Թոհիդ ծերանոցում: Նա իր տունը կտակել է Իրանի Նոր Ջուղայի համայնքին, որպեսզի այն վերածվի հանրակացարանի՝ հայազգի անապահով ուսանողների համար:

Ալենուշ Տերյանն արժանացել է բազմաթիվ հեղինակավոր պարգևների և մրցանակների՝ այդ թվում նաև Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային մրցանակի: Իրանում նրա մասին նկարահանվել է ֆիլմ՝ «Դեպի արևը» վերտառությամբ:

Զապել Եսայան

Նշանավոր գրող, արձակագիր, թարգմանիչ, հրապարակախոս, գրականագետ, հասարակական գործիչ

Ամերիկյան պարբերականները նրան համարում են աշխարհի 5 ամենախիզախ կանանցից մեկը: Զապել Եսայանը կանանց ազատագրման և հավասարության համար մղվող պայքարի հենասյուներից մեկն էր: Նա կնոջը տեսնում էր որպես հասարակության լիիրավ, ակտիվ ու փոփոխություններ բերող անդամ:

Կանանց ազատագրման համատեքստում Զապել Եսայանը առաջ էր քաշում համակարգային փոփոխությունների խնդիրը: Իր դստերն ուղղված նամակում նա քաջալերում է դեռահաս աղջկան լինել հավակնոտ և չշարժվել ընդունված նորմերով ու կարծրատիպերով, որոնք հաճախ հանգեցնում են նվաստ ու անգույն կյանքի:

> «Հոռաջին հերթին պետք է սարսափել միջակությունից, այսինքն՝ անգույն ու նվաստ դիրքից: Հայտնի մարդ դառնալ, անձնական արժանիքներ ցուցաբերել, բարձր նպատակի ծառայել – ահա սրանք պետք է լինեն քո ձգտումները: Ի՞նչ նշանակություն ունի երջանիկ կամ ապերջանիկ լինելը: Համենադժբախտ մարդը նա է, ով վարում է միջակ ու անօգուտ կյանք, ներքուստ ափսոսալով, որ վրիպել է իր կոչումից: Մի՛ վախեցիր հավակնոտ թվալուց: Քեզ իդեալների ձգտողը չի կարող համեստ մնալ, հեզ ու խոնարհ ապրել: Հարկավոր է, որ արդեն որոնես քո ուղին, և այն գտնելուց հետո անշեղ քայլես դեպի նպատակակետը՝ ուշադրություն չդարձնելով այն խորհուրդներին, որոնցով «գործնական» մարդիկ կփորձեն խափանել ճանապարհը:»

Զապել Եսայանը ծնվել է 19-րդ դարավերջին Կ. Պոլսի Սկյուտար հայկական թաղամասում: Ծննդավայրում կրթություն ստանալուց հետո

17-ամյա Զապելը՝ հոր աջակցությամբ մեկնել է Փարիզ և ուսումնասիրել գրականություն և փիլիսոփայություն՝ Սորբոնի համալսարանի և Կոլեջ դը Ֆրանսի դասընթացներին հաճախելով:

Փարիզում Զապել Եսայանը ստեղծագործում է հայերեն և ֆրանսերեն լեզուներով, գրում բազմաթիվ հոդվածներ, պատմվածքներ, վիպակներ և կատարում թարգմանություններ: Նա նույնացնում էր իրեն կանանց բոլոր կերպարների հետ և խոսում կանանց հավաքական ձայնով:

Կինը աշխարհ չէ եկած մինակ հաճելի ըլլալու համար: Կինը եկած է իր խելքը, մտայի, բարոյական և ֆիզիքական յատկութիւնները կարգայնելու համար: Ինքզինքին յարգող բոլոր կիներուն իտէալը միայն հաճելի ըլլալը պէտք չէ ըլլայ, այլ երկրիս վրայ գործօն բարերար տարր մը դառնալը:

Փարիզում Զապելը կազմում է սիրո վրա հիմնված ընտանիք՝ նկարիչ Տիգրան Եսայանի հետ, և չնայած բավական ապահով ու երջանիկ կյանքին, վերադառնում Կ. Պոլիս՝ իր հետ բերելով ազատագրման շունչն ու ոգին, շարունակելով ստեղծագործական, գրական-հասարակական բեղմնավոր գործունեությունը:

1915 թվականին թուրքական կառավարության կողմից կազմված աքսորի ենթակա հայ մտավորականների ցուցակում միակ կինը Զապել Եսայանն էր: Նա կարողանում է թաքնվել և փրկվել: Այնուհետև Զապել Եսայանը հաստատվեց Խորհրդային Հայաստանում, իսկ 1933 թվականին սկսեց դասավանդել Երևանի պետական համալսարանում: 1937 թվականին ստալինյան բռնաճնշումները հասան նաև նրան: Թե ինչպես ընդհատվեց այս ուժեղ ու զարմանահրաշ կնոջ կյանքը, հայտնի չէ: Միայն կա վերջին վկայությունը՝ 1943 թվականին Զապելն ուղարկել է իր վերջին նամակը Բաքվի բանտից:

Թեև բազմաթիվ առիթներով Զապել Եսայանը նշել է, որ ինքը ֆեմինիստ չէ, սակայն նրա կյանքն ու գործունեությունը պայքարող ու մարտնչող կնոջ ոգեշնչող օրինակ է:

Շուշանիկ Կուրղինյան

Հայ բանաստեղծուհի

Շուշանիկ Կուրղինյանը հայ ֆեմինիստ բանաստեղծուհի է, ով հանդես է եկել կեղեքվածների ու ճնշվածների՝ կանանց, երեխաների, աշխատավոր դասակարգի ու Հայոց ցեղասպանությունը վերապրած գաղթականների իրավունքների պաշտպանության դիրքերից: Կուրղինյանի պոեզիան ամբողջովին խավարամտության ու բռնության դեմ ըմբոստացող կանանց ազատության և հավասարության արտացոլումն է:

«*ինչ մի սիրիր ֆաղկի նման,*
ղուլեմ ապրել ես արժանի...»

Շուշանիկ Կուրղինյանը ծնվել է 1876 թվականին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Սովորել է ծննդավայրի Արղության օրիորդաց դպրոցում, ռուսական պրոգիմնազիայում: Վաղ հասակից ստեղծագործել է, տպագրվել տարբեր հանդեսներում, զբաղվել քաղաքական գործունեությամբ, որի պատճառով էլ ենթարկվել է հետապնդումների և 1903 թվականին փախել Ռոստով: Խորհրդային Հայաստանի հիմնադրումից հետո վերադարձել է Գյումրի, ապա տեղափոխվել Երևան, որտեղ էլ մահացել է 1927 թվականին:

Նրա ըմբոստ պոեզիայի մեծ մասը նվիրված է կանանց իրավունքներին: Կուրղինյանը դեմ է դուրս գալիս կնոջ դերին, որը միայն ընտանեկան պարտականությունների կատարման շրջանակում է՝ պայմանավորված սեռով, ինչը յուրատեսակ ստրկություն է.

«Եվ ֆռ կյանքի միակ պայման՝
Ուտել, քնել ու ծնել՝
Որպես կնիք ստրկության,
Ինչն, որ աղջիկ ես ծնվել:»

Կուրղինյանի «Ապրել եմ ուզում» բանաստեղծությունն ամբողջովին արտահայտությունն է այն գաղափարների, որոնք նա տարածում էր: Նա նկարագրում է այն բոլոր խնդիրները, որոնց առջև կանգնած է կինը՝ խեղճությունը, իր կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու անթույլատրելիությունը, տղամարդու ենթական լինելը: Սակայն, միևնույն ժամանակ առկա է այդ անհավասարությունը և անարդարությունը հաղթահարելու և ապրելու մեծ ուժ և ձգտում.

«Ուզում եմ ապրել, սիրել եմ ուզում, գործել եմ ուզում, ստեղծել, վաստակել, չլինել ենթակա ու ստորադաս:»

Խոսելով կանանց մասին՝ Կուրղինյանն իր ստեղծագործության մեջ ազատատենչ, ինքնուրույն և իր կյանքի համար պատասխանատու կնոջ կերպարը հակադրում է նյութապաշտ ու պճնամոլ կանանց, ովքեր ապրում են միայն հագուստի, արդ ու զարդի համար և չունեն այլ ձգտումներ.

«Խղճում եմ ես ձեզ՝ շվայտ գերիներ,
Միտքը թավիշե ճալքերում կորսրած.
Որ ուղեղ ունեք, բայց չկան մտքեր,
Որ սրտեր ունեք կեղծիքով ներկված...»

Շուշանիկ Կուրղինյանի ֆեմինիստական պոեզիան արդիական է մինչև հիմա: Այժմյան ֆեմինիստական նախաձեռնությունները հաճախ իրականացնում են տարբեր միջոցառումներ, որոնց ընթացքում կարդում են Կուրղինյանի բանաստեղծությունները և գրում նրա հեղափոխական տողերը տարբեր հանրային տարածքներում՝ որպես կանանց ազատագրման կենարար խոսքեր:

Քի Բրաուն

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպան, լրագրող և սցենարիստ, #DisabledAndCute հեշթեգի հեղինակը

Քի Բրաունն արդեն կայացած անկախ լրագրող և գրող էր, երբ 2017 թվականին Twitter-ում ստեղծեց #DisabledAndCute հեշթեգը, որի ներքո տեղադրեց իր լուսանկարները: Կարճ ժամանակահատվածում այդ քայլը վարակեց ողջ համացանցը և հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ունեցավ զորեղացնող և ոգևորող ազդեցություն:

Քի Բրաունը ծնվել է մանկական ուղեղային կաթվածով, նա ունի երկվորյակ քույր: Մանկության տարիները ծանր էին հաշմանդամություն ունեցող աղջնակի համար: Նրան ծաղրում էին դրսում, կրթական հաստատություններում, և նա երազում էր ընդունված ու սիրված լինելու մասին՝ անընդհատ մտածելով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ շրջապատի վերաբերմունքը փոխելու մասին:

Քի Բրաունի երկվորյակ քույրը հաշմանդամություն չուներ, և նրան «Գեղեցկուհի» էին կոչում: Քույրերի հարաբերությունները բարդ էին ու լարված, սակայն Քի Բրաունը մեծ ջանք գործադրեց նախանձի ու անարդարության զգացումը հաղթահարելու և քույրերի միջև ստեղծված իրավիճակը հասկանալու և փոխելու համար:

> *Ես ունեմ հաշմանդամություն, բայց դա ամենը չէ, ինչ ես ունեմ:*

Իր «Գեղեցկուհին. կյանքի, փոփ-մշակույթի, հաշմանդամության և ինձս ինձ սիրահարվելու այլ պատճառների մասին» գրքում նա ներկայացնում է հաշմանդամություն ունեցող կնոջ կերպարը, որն իրեն համադրում է ընկերների կողմից գեղեցկուհի տիտղոսը կրող, սիրված ու շարժուն երկվորյակ քրոջ հետ: Կոտրելով կարծրատիպեր և հզորացնելով

իր համայնքը՝ Բրաունը քաջալերում է հաշմանդամություն ունեցող կանանց, որպեսզի նրանք խոսեն իրենց իրավունքների մասին, ընդունեն սեփական գեղեցկությունը և ինքնատիպությունը, բարձրաձայնեն իրենց մասին:

Տարիներ շարունակ ինքնավերլուծության, կրթության և ստեղծագործական աշխատանքի արդյունքում Քի Բրաունը սկսեց վստահել իր ուժերին, փոխեց հասարակական մշակույթի կողմից սնուցված մոտեցումները և ազատագրվեց հասարակության կողմից ներարկված բարդույթներից: Նա ստացավ լրագրության բակալավրի աստիճան՝ Նյու Յորքի համալսարանում և սկսեց ակտիվորեն գրել տարբեր լրատվամիջոցներում:

Նա իր էսսեների միջոցով ուսումնասիրում է, թե ինչ է նշանակում լինել սևամաշկ և հաշմանդամություն ունեցող կին աշխատունակ սպիտակամաշկ Ամերիկայում: Իր ստեղծագործություններում Քի Բրաունն անդրադառնում է խտրական մշակույթին, գեղեցկության չափանիշներին և մարմնի պատկերմանը.

> *«Ես չեմ յանկանում, որպեսզի հաշմանդամությունը խղճահարություն առաջացնի, դա իմ ամենօրյա կյանքն է, և ես ուզում եմ այն ապրել արժանապատիվ կերպով:»*

Որպես հաշմանդամություն ունեցող սևամաշկ կին և ակտիվիստ՝ Բրաունը նշում է, որ ցանկանում է հեռուստատեսությամբ և ֆիլմերի գլխավոր դերերում տեսնել հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի կանանց:

Հելեն Քելլեր

Ամերիկացի հայտնի գրող, էսսեիստ, հասարակական գործիչ

Հելեն Քելլերը 20-րդ դարասկզբին պայքարում էր կանանց ընտրելու իրավունքի, հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների իրավունքների համար: Նա եղել է տեսողության և լսողության խնդիր ունեցող առաջին մարդն աշխարհում, ով ստացել է բակալավրի աստիճան:

> *Դու չես կարող համաձայնել սողալ, երբ ուզում ես ճախրել:*

1880 թվականին Քելլերների ընտանիքում ծնված Հելենը 19 ամսականում հիվանդանում է մենինգիտով և կորցնում լսողությունն ու տեսողությունը: Այդ տարիներին տեսողության և լսողության խնդիր ունեցող երեխաների հետ աշխատանքը դեռևս սաղմնային փուլում էր, և նրա ծնողները չգիտեին՝ ինչպես հոգ տանել իրենց զավակի մասին: Մինչև 6 տարեկան դառնալը Հելենը լիովին անհաղորդ էր: Ծնողների համար լուրջ խնդիր էր նրան առօրյա պարզագույն գործողություններ կատարել, օրինակ ուտելիքը բերանը տանել կամ ծաղիկը քթին մոտեցնել սովորեցնելը:

Երբ Հելենը դարձավ 7 տարեկան, նրա ծնողները որոշեցին ուսուցիչ գտնել իրենց դստեր համար: Պերկինսի կույրերի դպրոցի տնօրենը նրանց ուղարկեց երիտասարդ մասնագետ Էննի Սալիվանին, ում հաջողվեց աղջկա հետ շփման ուրույն մոտեցում գտնել, ինչը հիմնովին փոխեց Հելենի կյանքը: Էննի Սալիվանը Հելենի հետ ապրել է մինչև իր կյանքի վերջը և եղել նրա մշտական ուղեկիցը, ուսուցիչն ու օգնականը:

Մի քանի դպրոցներում միջնակարգ կրթություն ստանալուց հետո Քելլերը ընդունվել է Ռեդքլիֆ հայտնի քոլեջը, որտեղ էլ ստացել է բակալավրի աստիճան՝ դառնալով տեսողության և լսողության խնդիր ունեցող առաջին մարդն աշխարհում, ով ստացել է բարձրագույն կրթություն:

> *Մեկնիկ յուրաքանչյուրին այնքան շատ բան է տրված, որ չարժե ժամանակ վատնել՝ մտածելով այն ամենի մասին, ինչ չունենք:*

Հելեն Քելլերը դարձավ հայտնի էսսեիստ և գրող, ինչպես նաև հասարակական գործիչ և ակտիվիստ: Շատերն էին ցանկանում շփվել նրա հետ. նա ընկերացավ Մարկ Տվենի, Ջոն Ռիդի և Էմմա Գոլդմանի հետ, դարձավ հեռախոսի հայտնի գյուտարար Ալեքսանդր Բելի հոգևոր դուստրը, օգնեց Չարլի Չապլինին աշխատել «Քաղաքի լույսերը» ֆիլմի վրա, որի հերոսուհին ևս կույր աղջիկ էր:

Մարկ Տվենը հաճախ էր հրավիրում Հելենին և Էննիին իր տուն: Հելենը պաշտում էր այդ այցելությունները, քանի որ Տվենը որևէ կերպ չէր տարբերակում նրան մյուսներից, չէր փոխում իր վարքագիծը կամ խոսելու ձևը հանուն նրա, ինչպես շատերն էին գիտակցաբար կամ անգիտակցաբար անում: Շատերը կարծում են, որ հետագայում՝ Ժաննա դ՛Արկի կերպարը ստեղծելիս, Տվենը ոգեշնչվել է այս երկու կանանցից:

Հելեն Քելլերը մահացել է 1968 թվականին: Իր զարմանահրաշ կյանքի ընթացքում նա գրել է բազմաթիվ փայլուն էսսեներ, խորը և հուզիչ հոդվածներ, բազմաթիվ նամակներ և մի քանի գրքեր, որոնցից երկուսը դարձել են բեսթսելերներ՝ «Աշխարհը, որտեղ ես ապրում եմ» և «Իմ կյանքի պատմությունը»: Նա դարձավ այն 20 ամերիկուհիներից մեկը, որոնց անունները նշված են Փառքի սրահում:

> *Երբեք մի իզեյրեք ձեր գլուխը, բարձր պահեք այն, նայեք ուղիղ աշխարհի աչքերին:*

Մարի Կյուրի

Կրկնակի Նոբելյան մրցանակակիր, Փարիզի համալսարանի առաջին կին պրոֆեսորը

Մարի Կյուրին ապրել և աշխատել է 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին, երբ գիտության և քաղաքականության աշխարհում բացառապես տղամարդիկ էին գերիշխում: Եվ նույնիսկ այն բանից հետո, երբ Մարին ամուսնու հետ միասին ստացավ առաջին Նոբելյան մրցանակը, նրան ընկալում էին որպես ամուսնու օգնական: Նա շարունակ պետք է ապացուցեր իր բարձրագույն գիտական մակարդակը՝ աշխատելու անհավատալի ունակությամբ և գիտական թեմաներով ամենաաղմկոտ բանավեճերին մասնակցելու միջոցով: Դա հեշտ չէր. շատերը քննարկումների ժամանակ չէին խնայում ծայրահեղ խտրական ու ստորադասող մեկնաբանությունները, որոնց Մարին համարձակորեն հակադարձում էր: Այնուհետև նա ստացավ երկրորդ, այս անգամ անհատական Նոբելյան մրցանակը՝ ռադիումի և պոլոնիումի տարրերի հայտնագործման համար:

Հետազոտական գաղափարը բացառապես Մարիինն էր. ոչ ոք չէր օգնել նրան ձևակերպել այն, և չնայած նա հաճախ էր հարցնում ամուսնու կարծիքը դրա մասին, նա հստակորեն սահմանում էր, որ ինքն է այդ գաղափարի հեղինակը:

> «*Թույլ մի տվեք, որ խտրականությունը կանգնեցնի ձեզ:*»

Մարի Սկլադովսկայան ծնվել է 1867 թվականին Վարշավայում: Գիտության հանդեպ սերը եկել է հորից, ով ֆիզիկայի և մաթեմատիկայի պրոֆեսոր էր: Նա վաղ տարիքում կորցնում է մորը, ինչը ծանր ազդեցություն է թողնում փոքրիկ աղջնակի վրա: Այնուամենայնիվ, հայրն

ամեն կերպ հետևում է Մարիին, հոգ տանում, որ նա կրթություն ստանա: Լեհաստանի դպրոցում ուսանելուց հետո Մարին մեկնում է Փարիզ, քանի որ կանայք Լեհաստանում համալսարան հաճախել չէին կարող: Նա գրանցվում է Սորբոնի համալսարանի գիտական հոսքում և ավարտում ֆիզիկայի ֆակուլտետը: Ապա, շարունակելով ուսումը, ստանում է նաև գիտական աստիճան մաթեմատիկայից:

Իր գիտափորձերն իրականացնելու փնտրտուքներն այդ տարիներին նրան բերում են Պիեռ Կյուրիի լաբորատորիա, որի հետ էլ Մարին կապում է իր կյանքը: Ամուսնական կյանքին զուգընթաց զարգանում է նաև գիտական ուսումնասիրություններով լի համագործակցությունը:

1898 թվականին Կյուրիները գիտական զեկույց համահեղինակեցին՝ հայտարարելով իրենց հայտնաբերած նոր տարրի մասին, որն անվանեցին պոլոնիում՝ ի պատիվ Մարիի հայրենի Լեհաստանի (Պոլոնիա): Նույն տարվա ընթացքում գիտական զույգը հայտարարեց երկրորդ տարրի գոյության մասին, որն անվանեցին ռադիում:

1903 թվականին Մարի Կյուրիին շնորհվում է Փարիզի համալսարանի դոկտորի աստիճան: Նույն թվականին Պիեռ և Մարի Կյուրիներին շնորհվում է Նոբելյան մրցանակ՝ ֆիզիկայի բնագավառում: 1911 թվականին արդեն միայն Մարի Կյուրիին շնորհվում է երկրորդ Նոբելյան մրցանակը, այս անգամ՝ քիմիայի բնագավառում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մարի Կյուրին արագ վիրահատարաններում ճառագայթային սարքավորումներով լի փոխադրամիջոցով օգնում էր ռազմաճակատում վիրավոր զինվորներին: Նա ձեռք է բերում ռենտգենյան ճառագայթման սարքեր, փոխադրամիջոցներ, օժանդակ գեներատորներ և ստեղծում շարժական ռադիոլոգիական միավորներ, որոնք հայտնի դարձան որպես «փոքրիկ Կյուրիներ»:

Մարի Կյուրին մահացավ 1934 թվականին՝ ապլաստիկ անեմիայից, որը հավանաբար ճառագայթումից երկար տարիներ չպաշտպանված լինելու հետևանք էր: Մահից հետո Մարի Կյուրին դարձավ առաջին կինը, ով իր վաստակի համար թաղվեց Փարիզի Պանթեոնում:

Ֆրիդա Կալո

Մեքսիկացի նկարչուհի

Ֆրիդա Կալոն ֆեմինիստական արվեստի կարևորագույն ներկայացուցիչներից մեկն է, ով առավել հայտնի է իր բազմաթիվ դիմապատկերներով, կնոջ մարմնի ու ապրումների արտացոլման ինքնապատկերներով:

Ֆրիդան պատկերում էր իրական կանանց՝ մերժելով կանացի գեղեցկության վերաբերյալ ավանդական մոտեցումները: Նա արտացոլում էր այն բոլոր փորձառությունները, որոնց միջով անցնում են կանայք՝ հղիություն, հղիության արհեստական ընդհատում, ծննդաբերություն, կրծքով կերակրում և այլն: Ֆրիդան կտավին էր հանձնում կյանքի այն բոլոր երագները, որոնք արվեստում կա՛մ անտեսվում, կա՛մ ներկայացվում էին հայրիշխանական համակարգի աչքերով:

Փաստացի սեփական ապրումներն ուսումնասիրելով՝ նա լույս սփռեց այն փորձառությունների վրա, որոնք կիսում են բոլոր կանայք: Ֆրիդան ինքն իր նկարների մասին ասում էր.

> «*Դրանք իմ էության ամենաանկեղծ արտահայտությունն են:*»

Ֆեմինիզմի խորհրդանիշ դարձած Ֆրիդա Կալոն ծնվել է 1907 թվականին Մեքսիկայում՝ Գերմանիայից ժամանած հրեայի և հնդկացու արմատներով մեքսիկուհու ընտանիքում: 6 տարեկանում Ֆրիդան հիվանդանում է պոլեոմելիտով, որի հետևանքով աղջնակը սկսում է կաղել: Հասակակիցները նրան ծաղրում էին, մականուններ հորինում, սակայն, ֆիզիկական ու հոգեկան ցավը հաղթահարելով, Ֆրիդան

զբաղվում էր սպորտով, փորձում թաքցնել կաղությունը երկար շրջազգեստների և տղամարդու հագուստի տակ: Այդ տարիներին Ֆրիդան երազում էր բժիշկ դառնալու մասին և 15 տարեկանում ընդունվում է բժշկական բարձրագույն դպրոց: Նա Մեքսիկայում առաջին կանանցից էր, ում հաջողվել էր տղաներին հավասար կրթություն ստանալ: Սակայն 18 տարեկանում նրա հետ կատարվում է ճակատագրական շրջադարձ. սարսափելի ավտովթարի հետևանքով Ֆրիդան հայտնվում է հիվանդանոցային մահճակալին: Շաբաթներ շարունակ անգիտակից լինելուց հետո Ֆրիդան ուշքի է գալիս և սկսում նկարել: Աղջկա հայրը մահճակալին հարմարեցված սարքեր է տեղադրում, որպեսզի Ֆրիդան կարողանա նկարել: Նա իրեն տեսնում էր վերևում ամրացված հայելու միջոցով:

Նա իր կտավներում պատկերում էր կնոջ կյանքի անբաժան մասը՝ ցավը, որը, սակայն, հաղթահարում է անասելի համառությամբ: Ինքնադիմանկարներում Ֆրիդան երբևէ չի ժպտում՝ կարծես յուրատեսակ մարտահրավեր նետելով տղամարդկանց կանոններով ապրող և անարդար աշխարհին ժպտացող կանանց պատկերներին:

> *Միայն ինձ եմ ճանաչում ու այդ իսկ պատճառով պատկերում եմ իմ իրականությունը, առանց կանգ առնելու նկարում եմ գլխումս ծնվող ամեն ինչ:*

Վթարից 4 տարի անց Ֆրիդան ոտքի է կանգնում և ընդունվում է Մեքսիկայի ամենահեղինակավոր համալսարաններից մեկը, որտեղ հանդիպում է ամուսնուն՝ արդեն իսկ հռչակ ձեռք բերած նկարիչ Դիեգո Ռիվերային:

1938 թվականին Նյու-Յորքում կայացած անհատական ցուցահանդեսը Ֆրիդային բերում է համաշխարհային ճանաչում, սակայն առողջական վիճակը սկսում է վատթարանալ: 35 վիրահատությունների արդյունքում մարմինը հետզհետե թուլանում էր, անասելի ցավերը ստիպում էին օպիում օգտագործել, իսկ կյանքի վերջում նա տեղաշարժվում էր միայն անվասայլակով: 47 տարեկանում նկարչուհին մահանում է, իսկ որոշ ժամանակ անց նրա և Դիեգոյի տունը վերածվում է թանգարանի:

Վիրջինիա Վուլֆ

Ֆեմինիստ գրող, գրաքննադատ, մոդեռնիստական գրականության ներկայացուցիչ

Վիրջինիա Վուլֆը ֆեմինիստական շարժման նշանավոր դեմքերից է, ով իր ստեղծած գրականության միջոցով կոտրում է հասարակության մեջ առկա կարծրատիպերը: Վիրջինիա Վուլֆի բարձրարժեք գրականության մեջ արտացոլված ֆեմինիստական հայացքները ձևավորվել են ընտանիքում: Հոր բռնարար կերպարը, ընտանիքում տղաների և աղջիկների նկատմամբ հաստատված նյութական աջակցության և կրթության անհավասար պայմանները պարարտ հող էին ստեղծում մտածող ու վերլուծող աղջկա ֆեմինիստական հայացքների ձևավորման համար:

Վիրջինիան քննադատաբար էր վերաբերվում անխնա մրցակցության վրա հիմնված կրթական համակարգին: Նա գտնում էր, որ հենց այդ համակարգն է տղամարդկանց դարձնում դաժան, անողոք և երևակայությունից զուրկ:

Ադելինա Վիրջինիա Ստիվենը ծնվել է 1882 թվականին բրիտանական ազնվականների ընտանիքում: Հայրը գրաքննադատ էր, և Վիրջինիան մանկուց շփվում էր գրական միջավայրի ամենահայտնի ներկայացուցիչների հետ: Վիրջինիան մանկուց հաղորդակից է եղել գրականությանը, ուսումնասիրել է լատիներեն և հունարեն: Սակայն գրականության լուսավոր հոսքերը մթագնում էին փոքրիկ աղջնակի նկատմամբ կատարվող սեռական ոտնձգություններով, որոնց մասին նա բազմիցս բարձրաձայնել է: Վիրջինիան 13 տարեկան էր, երբ մահանում են մայրը, ապա եղբայրն ու քույրը:

Այդ անձնական ողբերգությունների շղթան ցնցում է դեռահաս Վիրջինիայի հոգեկան աշխարհը: Իսկ հոր մահից հետո նա հայտնվում է հոգեբուժարանում: Հոգեկան առողջության հետ կապված խնդիրները

հետապնդում են նրան ամբողջ կյանքի ընթացքում, սակայն, լինելով մտածող ու ստեղծագործ անհատականություն, նա վերականգնվում է և որոշ ժամանակ անց վերադառնում տուն: Վիրջինիան քույրերի ու եղբայրների հետ միասին հիմնում է Բլումսբերի խմբակը, որն ինտելեկտուալ երիտասարդների համար դառնում է ամենասիրելի վայրերից մեկը:

Նրանց տանն էին հավաքվում երիտասարդ արվեստագետները, որոնց թվում էր նաև լրագրող և գրող Լեոնարդ Վուլֆը: Վիջինիան և Լեոնարդը շուտով ամուսնանում են: Լեոնարդն ամեն ինչում աջակցում էր կնոջը: Ամուսինները հիմնում են սեփական հրատարակչություն, որտեղ էլ հրատարակվում են Վիրջինիայի ստեղծագործությունները: Արտացոլելով ամուսնական կյանքի և կնոջ ազատության մասին իր ընկալումները՝ նա իր «Միսիս Դալոուեյ» վեպում գրում է.

> *Հիմնական հարաբերություններում պետք է լինի կիզում, պետք է լինի ապատություն այն մարդկանց համար, ովքեր օրեր են ապրում նույն հարկի տակ, և Ռիչարդը կնոջը տալիս էր այդ ապատությունը, նույնն էլ կնոջ կողմից սպասում էր նա:*

1977 թվականին մեծ էկրան է բարձրանում հոլանդացի ռեժիսոր Մառլեն Գորրիսի կողմից նկարահանված համանուն օսկարակիր ֆիլմը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարում սրվում է Վիրջինիայի հոգեկան առողջության վիճակը, մասնավորապես նա ցնցումներ է ապրում Եվրոպայում ֆաշիստական գաղափարախոսության և հրեաների նկատմամբ կատարվող հետապնդումների պատճառով, քանի որ ամուսինը՝ Լեոնարդ Վուլֆը հրեա էր: Այդ տագնապներն ու ցնցումները Վիրջինիային հասցնում են ինքնասպանության:

Իր բոլոր ստեղծագործություններում Վիրջինիա Վուլֆը քննադատում է հայրիշխանական համակարգը, հասարակության մեջ առկա կարծրատիպերը և չի հանդուրժում պատերազմը: Վիրջինիա Վուլֆի ստեղծագործությունները մեծ ազդեցություն են ունեցել ֆեմինիստական գրականության զարգացման վրա: